

Կարծիք

Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերաբերյալ ժԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

18-ը օգոստոսի 2020 թ.

Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերաբերյալ ժԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է ներկայումս ընթացող ֆինանսական վերահսկողության ողջ համակարգի արմատապես վերանայման համատեքստում պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական վիճակի առանձնահատկություններին: Ընդ որում, հեղինակին հաջողվել է հետազոտության համար ընտրել թեմային առնչվող առավել արդիական հարցադրումները:

Ատենախոսությունում համարժեք ներկայացված են թեմայի և թեմային անմիջականորեն առնչվող առանձին հարցադրումների արդիականության վերաբերյալ բավարար չափով հիմնավորված փաստարկներ: Մասնավորապես, հեղինակն ընդգծել է. «Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև պետական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից վերահսկողական գործառույթների և կառուցակարգերի որակական փոփոխությունների վերաբերյալ գիտական հարթության վրա համալիր առաջարկությունների ներկայացմամբ՝ վերահսկողության կազմակերպման և իրականացման իրավական կարգավորման հիմնախնդրի տեսագործական նշանակության, ինչպես նաև նրանով, որ գիտատեսական հարթության վրա համալիր և համակողմանի վերլուծության նյութ դեռևս չի դարձել նաև Ազգային ժողովը և Հաշ-

վերննիչ պալատը՝ որպես պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմիններ արդի սահմանադրաիրավական բարեփոխումների խորապատկերում»:

Մինչ ներկայացված ատենախոսությանն անդրադառնալը, հարկ եմ համարում նկատել, որ իմ կողմից այն համադրվել է նախորդ պաշտպանությանը ներկայացված ատենախոսության հետ, որի արդյունքներով պարզվել է, որ սույն հետազոտությունը շահեկանորեն տարբերվում է, դրանում հնարավոր հետևողականությամբ հաշվի են առնվել մասնագիտական խորհրդի անդամների հարցադրումներում և ելույթներում հնչած դիտողությունները: Բոլոր այն հարցադրումների առնչությամբ, որոնք վերաբերել են պաշտպանության ներկայացված եզրահանգումներին, հեղինակը, այդպիսիք պահպանելու և դարձյալ աշխատանքում ներառելու պարագայում, փորձել է դրանք ուղեկցել համալիր հիմնավորումներով և առավել ամբողջական պարզաբանումներով: Բոլոր դեպքերում, որոշ եզրահանգումների առնչությամբ, կարծում ենք, այս փուլում էլ կան մասնակի խնդիրներ, որոնց անդրադարձ է արված ստորև:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, դրանում պահպանված են շարահյուսական և քերականական կանոնները, որպես կանոն, բացակայում են խրթին մտքերը, բացի այդ, հիմնականում, պահպանված են ատենախոսության ձևավորմանը ներկայացվող պահանջները, իսկ այդ կապակցությամբ առանձին նկատառումներին անդրադարձ է արված ստորև:

Հետազոտության արժանիքներից է նաև ակնհայտ համարժեք գիտագործնական նյութի առկայությունը, ընդ որում, հեղինակը ոչ միայն փորձել է իր փաստարկները հիմնավորել կոնկրետ նորմատիվ փաստաթղթերով, միջազգային փորձի արդյունքներով և տեսական աղբյուրներով (այդ թվում՝ արտասահմանյան հեղինակների մենագրություններում արտացոլված մոտեցումներով), բացահայտել է դրանց ուղղվածությունն ու կիրառման գործնական հիմնախնդիրները, այլև կատարել հետազոտության առանձնահատկություններից բխող և արդիական նշանակություն ունեցող պատմաիրավական և համեմատական-իրավական ուսումնասիրություններ:

Հեղինակի կողմից մշակվել են նաև օրենսդրությունը բարելավելու վերաբերյալ մի շարք գիտագործնական արժեք ունեցող առաջարկություններ, որոնք կարող են պիտանի լինել պետական ֆինանսական վերահսկողության ոլորտի իրավական հիմքերը բարելավելու, մասնավորապես, ֆինանսական վերահսկողության պետական մարմինների կազմավորման ու գործունեության իրավական կարգավորումները կատարելագործելու տեսանկյունից:

Ատենախոսության ձևավորումը, կառուցվածքը և ծավալը, հիմնականում, համապատասխանում են սահմանված պահանջներին:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Սկզբունքորեն խոցելի չէ ֆինանսական ոլորտի կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի կողմից փորձագիտական եզրակացություններ ներկայացնելու առնչությամբ եզրահանգումը, սակայն գիտական նորույթի տեսանկյունից սույն եզրահանգումը դիտարկելիս, հարկ է արձանագրել, որ այն, այնուամենայնիվ, չի կարող ընկալվել, որպես թեկնածուական ատենախոսությանը ամբողջովին համահունչ գիտական դրույթ: Վերջին հաշվով, հանրային իշխանության ցանկացած մարմին իրավասու է կազմելու և խորհրդարան ներկայացնելու մասնագիտական եզրակացություններ, որոնք պարտադիր չեն այնպես, ինչպես և պարտադիր չեն իրավասու կառույցի՝ արդարադատության նախարարության, փորձագիտական եզրակացությունները:

Հասկանալի է, որ հաշվեքննիչ պալատի, որպես հիրավի մասնագիտական և գործնական անհրաժեշտ փորձառություն ունեցող կառույցի եզրակացությունները կարող են նպաստել օրենսդրության որակի բարելավմանը, սակայն դա, թերևս, հատվածական լուծում է, քանի որ հայրենական իրավական համակարգում օրենսդրական ակտերի մշակման աշխատանքն է ամբողջովին դարձել խոցելի և արմատական բարելավումների կարիք ունի՝ սկսած այդպիսիք մշակելու իրավասություն ունեցող կառույցների շրջանակն ուրվագծելու հարցադրումից:

2. Հեղինակն առաջարկում է. «Հաշվեքննիչ պալատի կողմից իր լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ վերջինիս համապատասխան անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր չտրամադրելու, ինչպես նաև հաշվեքննության ընթացքին խոչընդոտելու համար (ինչը հնարավոր չէ գործնականում բացառել) օրենսդրությամբ սահմանել նաև համապատասխան վարչական պատասխանատվության միջոցներ»:

Ընդհանրապես, երբ գիտական հետազոտության նյութ է դիտարկվում որևէ արարքի համար պատասխանատվություն սահմանելը կամ արդեն իսկ սահմանված պատասխանատվությունը խստացնելը, հարկ է ոչ թե որպես հիմք համարել «ինչը գործնականում հնարավոր չէ բացառել» և նույնաբնույթ այլ ձևակերպումներով փաստարկները, այլ հստակ հիմնավորել, թե ինչու է այդ արարքի համար պատասխանատվությունը դիտարկվում իրավաչափ: Բացի այդ, հարկ էր սպառիչ հիմնավորել, թե հանրային ծառայողների պարագայում Հաշվեքննիչ պալատի գործունեությանը խոչընդոտելու համար ի՞նչ նկատառումներով է նախապատվությունը տրվում հենց վարչական պատասխանատվությանը, ինչու առավել հիմնավորված չի համարվել կարգապահական պատասխանատվությունը, երբ խոսքը վերաբերում է վերջիններիս կողմից իրենց անմիջական ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելուն: Վարչական տույժը, ինչը հիմնականում դրսևորվելու է տուգանքի տեսքով, հիշյալ իրավիճակի համար, թերևս, այնքան էլ համարժեք ու արդյունավետ միջոց չէ:

3. Ատենախոսությունում առաջարկվել է մշակել գնումների հետ կապված բողոքներ քննող պաշտոնյայի կամ մարմնի անկախության ապահովման երաշխիքներ, որպեսզի վերջինս իրականում հանդես գա որպես անկախ և ինքնուրույն վարչական մարմին՝ ապահովելով Առևտրի համաշխարհային կազմակերպության «Պետական գնումների համաձայնագրի» և «Գնումների մասին» օրենքի պահանջները, քանզի գործադիր իշխանության պետական մարմնի ենթակայության տակ գտնվող մարմինը չի կարող ապահովել իր լիակատար անկախությունը:

Ընդհանրապես, գործադիր իշխանության պետական մարմնի ենթակայության տակ գործելը, միանգամայն օրինաչափորեն, ենթադրում է որոշակի կախվածություն, կաշկանդվածություն, սակայն հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե անդրադարձ արվեր նաև այն հարցադմանը, թե ինչպե՞ս կարելի է հաղթահարել անկախ մարմիններին բնորոշ այն միտումները, որոնք, որպես կանոն, հանգեցնում են անհրաժեշտ վերահսկողությամբ պայմանավորված խիստ հայեցողական որոշումներ կայացնելուն:

Սա ներկայումս միջազգային փորձի համատեքստում բավականին անհանգստացնող երևույթ է, ինչով էլ պայմանավորված բազմաթիվ երկրներում աստիճանաբար սահմանափակում են անկախ գործադիր իշխանության մարմինների շրջանակը: Ընդ որում, նկատի է ունեցվում նաև այն, որ վերջիններս հայտնվում են նաև խորհրդարանական վերահսկողությունից դուրս՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Բացի այդ, հարկ էր անդրադառնալ նաև այն հարցադրմանը, թե ինչպե՞ս է գործող Սահմանադրության կարգավորումների ներքո հեղինակը պատկերացնում անկախ մարմնի ստեղծումը, երբ այդպիսին նախատեսված չէ Սահմանադրությամբ, իսկ եթե խոսքը ինքնավար մարմինների մասին է, ապա հարկ էր անդրադառնալ դրա առանձնահատկություններին՝ արդեն այդ կարգավիճակի տեսանկյունից:

4. Հեղինակը հարկային օրենսդրության պարզեցումը համարել է որպես ոչ միայն գործարարների կողմից օրենսդրության միասնական կիրառության ապահովմանը նպաստող, այլև ստուգումների կազմակերպումը ստուգաթերթի հիման վրա կատարելուն հանգեցնող միջոց, ըստ այդմ էլ՝ նշել է, որ անհրաժեշտ է հարկային օրենսդրությունը պարզեցնելով՝ հետազայում անցնել « հարկային ծառայության՝ ըստ ստուգաթերթի ստուգումների անցկացման համակարգին:

Սկզբունքորեն՝ ըստ ստուգաթերթերի ստուգումներ անցկացնելու համակարգը խնդրահարույց չէ, սակայն հեռանկարային կտրվածքով առավել արդիական են էլեկտրոնային վարչարարության հարցադրումները: Ընդհանրապես,

ատենախոսությունն առավել շահեկան կլիներ, եթե ֆինանսական վերահսկողության համատեքստում ծագող արդի հարցադրումները հետազոտվեին էլեկտրոնային վարչարարության ներդրման հնարավորության տեսանկյունից:

5. Ատենախոսությունը զերծ չէ որոշ խմբագրական և ձևավորման թերություններից, մասնավորապես՝ ա) սխալ են շարադրված սահմանադրական մարմինների անվանումները, կոնկրետ այդ անվանումներից առաջ չպետք է լիներ «ՀՀ» հապավումը, ինչը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, բ) գրականության ցանկում նշված չեն այլ երկրների սահմանադրությունների, ինչպես նաև ԵԱՏՄ մարմինների իրավական ակտերի աղբյուրները, գ) հետազոտության նպատակը ձևակերպված է սուկ օրենսդրական առաջարկություններ ներկայացնելու կտրվածքով, մինչդեռ՝ հարկ էր անդրադառնալ գիտականորեն հիմնավորված եզրահանգումներին, որոնք փաստացի կան աշխատանքում և այլն: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ ատենախոսությունը բարեխիղճ սրբագրված է, դրանում չափազանց սակավ են վրիպակները, ինչպես նաև քերականական և շարահյուսական սխալները:

Ատենախոսության հիմնադրույթներին նվիրված հեղինակի մենագրությունը և հոդվածները բացառապես տպագրված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում ու ժողովածուներում, որոնք համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ նկատառումները, կարծում ենք, որ դրանք նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, հեղինակը նախորդ պաշտպանությանը հնչած դիտողություններին և նկատառումներին բաեխղճորեն է վերաբերել, կատարել է լրամշակման ծավալուն ու արդյունավետ աշխատանք, ըստ այդմ էլ՝ Րաֆֆի Գագիկի Նալչաջյանի «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

[Handwritten signature]

Գևորգ Դանիելյան

Գ.Բ. Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

[Handwritten signature]

Հարություն Խաչիկյան

«___» օգոստոսի 2020 թ.